ԵՍՈՒՆ ՆՈՐ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՆԴԵՊ, ԳՐԵՑ ՕԼԻՆԴ, ՇՐՋԱՊՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆ

## Նրա Հարության բազմաթիվ վկաները

«Ես հավատում եմ Փրկիչի Հարության բազմաթիվ վկաներին, ում փորձառություններն ու վկայությունները գտնվում են Նոր Կտակարանում՝ ի թիվս այլոց, Պետրոսի ու Տասներկուսի մյուս աշակերտների, թանկագին ու ջինջ Մարիամ Մագդաղենացու վկայություններին: Ես հավատում եմ Մորմոնի Գրքում զետեղված վկայություններին՝ ի թիվս այլոց, Առաքյալ Նեփիի ու Լիառատ երկրում նրա հետ գտնվող բազմության վկայություններին: Եվ ես հավատում եմ Ջոզեֆ Սմիթի ու Սիդնի Ռիգդոնի վկայություններին, ովքեր շատ ուրիշ վկայություններից հետո հայտարարեցին այս տնտեսության մեծագույն վկայությունը, «որ նա ապրո՛ւմ է: Քանզի մենք տեսանք նրան»: Նրա ամենատես աչքի հայացքի ներքո ես կանգնում եմ որպես վկա, որ Նազովրեցի Հիսուսը հարություն առած Քավիչն է, և ես վկայում եմ այն ամենի մասին, ինչը հետևում է Նրա Հարության *իրողությանը*: Թող որ դուք ստանաք այդ ամուր վկայությունն ու այդ նույն վկայության բերած հանգստությունը»:

**Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Հիսուս Քրիստոսի Հարությունը», *Լիահոնա*, մայիս 2014, 114:**

**Անձնական փորձառություն.** Չնայած մենք անձամբ չենք տեսել Քավիչի հարություն առած և կատարելագործված մարմինը, այսօր մենք կարող ենք կանգնել որպես Նրա վկաներ: Նա միշտ կարող է լինել մեր կյանքի կենտրոնում, անկախ այն բանից, թե ինչ ժամանակներում ու վայրերում ենք գտնվում: Ամեն անգամ, երբ առաջարկում ենք մեր սրտերը և ձեռքերը ուրիշներին ծառայելու համար, ցուցաբերում բարյացակամություն, բարություն և հարգանք բոլորի հանդեպ, պաշտպանում ճշմարտությունը և կիսվում ավետարանի մասին մեր վկայությամբ, մենք կանգնում ենք որպես Հիսուս Քրիստոսի ճշմարիտ վկաներ:



ՀՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՎԻՉԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## Կարիք չկա մենակ քայլել

«Զատկի այս տոների մեծ սփոփանքն այն է, որ քանի որ Հիսուսը կատարելապես միայնակ անցավ այդ երկար, մենավոր ճանապարհը, կարիք չկա, որ *մենք* նույնպես անցնենք այն: Նրա մենավոր ճամփորդությունը մեզ համար մեծ ընկերակցություն բերեց այդ ճանապարհի մեր փոքր տարբերակի համար՝ մեր ողորմած Երկնային Հոր հոգածությունը, Նրա Սիրելի Որդու անխափան ընկերակցությունը, Սուրբ Հոգու անսպառ պարգևը, երկնքի հրեշտակներին, վարագույրի երկու կողմում գտնվող ընտանիքի անդամներին, մարգարեներին ու առաքյալներին, ուսուցիչներին, ղեկավարներին ու ընկերներին: Այս բոլորը և դրանցից ավելին է տրված մեզ՝ որպես ընկերներ մեր մահկանացու ճամփորդության համար Հիսուս Քրիստոսի Քավության և Նրա ավետարանի Վերականգնման շնորհիվ: Գողգոթայի գագաթից հնչող փողն այն ճշմարտությունն է, որ մենք երբեք չենք լինի մենակ, ոչ էլ անօգնական, նույնիսկ, եթե երբեմն կարող է մենակություն զգանք: . . .

. . . Թող որ մենք կանգնենք Հիսուս Քրիստոսի կողքին «բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ [մենք] կարող է լինենք, նույնիսկ մինչև մահ», քանի որ անկասկած, Նա այսպես կանգնած էր մեր կողքին, *մինչև մահ,* և այն ժամանակ, երբ Նա ստիպված էր մենակ դիմակայել»:

**Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Ոչ ոք չկար Նրա կողքին», *Լիահոնա*, մայիս 2009, 88:**

**Անձնական փորձառություն.** Այս Զատիկի տոնին հիշեք Փրկիչի վերջին, միայնակ ճամփորդությունը: Նա զոհաբերեց ամեն բան, որ ուներ, որպեսզի դուք և յուրաքանչյուր ոք աշխարհում կարողանաք մաքրվել և հավերժական կյանք ունենալ: Սովորեք Նրա կատարյալ օրինակից: Պահեք Նրան ձեր մտքերում և ձեր սրտում: Եվ միշտ հիշեք, որ դուք երբեք մենակ չեք: Քանի որ Նա անցավ Իր վերջին ճամփորդությունը լիակատար մենակության մեջ, Նա ձեզ չի լքի: Նրա սերը ձեր հանդեպ անսահման է և անփոփոխ, և Նա պատրաստ կանգնած է, տալու ձեզ խաղաղություն, մխիթարություն և հույս՝ մինչ դուք շարունակում եք ձեր սեփական ճամփորդությունը: Նրա Քավության պարգևը հարատև է, և այն տրվել է ձեզ: ■

Տես, թե ինչպես է հին հրեական Զատիկի տոնն օգնում մեզ հասկանալ Զատիկը **lds.org/go/41817:**